

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան շքանշանակիր լավագույն հրամանատարները, որոնք երդմամբ խոստացան արդարացնել հայ ժողովրդի վստահությունը՝ անխնա ջախջախել գերմանական հրոսակներին, իսպառ ոչնչացնել նրանց ընդմիշտ վտարելով մեր երկրի սահմաններից։



Ազդանշանը «առաջ» տրված է։ Սասունցի Դավթի անվան տանկերը սլանում են առաջ։ Զորամասի հրամանատարի տանկը մարտական դրոշով ընթանում է շարասյան առջևից։

«ՕՐՀՆՈՒՄ ԵՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԵՎ ՆՐԱ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՂԹՈՒՄ, ՈՐ ԲԱՐՁՐՅԱԼԸ ԱՌԱՎԵԼ ԵՎՍ ԶՈՐԱՑՆԵ ՆՐԱՆՑ՝ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԵՎ ԹՇՆԱՄՈՒՆ ՋԱԽՋԱԽԵԼՈՎ ՎՏԱՐԵԼՈՒ ՄԵՐ ԵՐԿՐԻՑ»։

(ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ԿՈՉԻՑ)



*Զորամասի հրամանատար փոխգնդապետ Վոյնովսկին զորամասի անունից պատասխան ճառ է արտասանում։*

*«Ընդունելով «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը զորամասի հրամանատարության, սպաների, սերժանտների, տանկիստների և ինձ հանձնված զորամասի անունից վստահեցնում եմ Կարմիր Բանակի զրահատանկային զորքերի հրամանատարությանը եվ Հայ ժողովրդին, որ մենք անխնա կջախջախենք մեր երկիրը ներխուժող գերմանական հափշտակիչներին։*

*«Կեցցե Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունը»։*

«ՕՐՀՆՈՒՄ ԵՄ ՔԵԶ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԵՎ ՄԱՂԹՈՒՄ, ՈՐ ՏԵՐԸ ՔՈ ՊԱՅՔԱՐՈՂ ՈԳԻՆ ՀԱՆՈՒՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՈՒՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԵՀ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄԻՇՏ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՀԵ».

(ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ԿՈՉԻՑ).



*«Սասունցի Դավիթ» տանկային զորամասի հրամանատարությունը և շքանշանակիրները զորամասի դրոշակով։*

*Քաջարի հրամանատարները կտանեն տանկերը ի մարտ կատարելու իրենց սրբազան պարտականությունը՝ ազատագրելու համար մեր Մեծ Հայրենիքը ֆաշիստական զավթիչներից։*

*Թող Տերը զորավիգ լինի նրանց։*



*Մեր տանկերի ճզմիչի տակ իրենց վերջին շունչը կփչեն ֆաշիստական ավազակները՝ արգահատելի ոճրագործ Հիտլերի կամակատարները, որոնք իրենց արյունոտ ձեռքերով ավերեցին մեր Հայրենիքի սրբությունները։*



*Հայ ժողովրդի առասպելական հերոս Սասունցի Դավթի անվան տանկերը գտնըվում են վստահելի ձեռքերում։ Գերմանական զավթիչների դեմ մղվող մարտերում տանկիստները իրենց կյսակին անթառամ պսակով։*